ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Դաշնային մաքսային ծառայության (Ռուսաստանի Դաշնություն) միջև Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության սահմաններով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տեղեկատվության փոխանակման կազմակերպման մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն և Դաշնային մաքսային ծառայությունը (Ռուսաստանի Դաշնություն), այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում 1994 թ. ապրիլի 15-ին ստորագրված՝ «Մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին» համաձայնագրի վրա և նպատակ ունենալով կատարելու Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 2009 թ. սեպտեմբերի 25-ի՝ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի տասնմեկերորդ նիստի արձանագրության 3.6-րդ կետը,

ձգտելով ապահովել Կողմերի պետությունների մաքսային մարմինների միջև փոխգործակցությունը՝ Կողմերի պետությունների տնտեսական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակներով,

ընդունելով Կողմերի պետությունների սահմաններով (այսուհետ՝ սահմաններ) տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև առևտրի համար բարենպաստ պայմաններ ապահովելու նպատակներով,

ղեկավարվելով Համաշխարհային մաքսային կազմակերպության նորմերով, ստանդարտներով և հանձնարարականներով, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման՝ համաշխարհային ընդունված պրակտիկայով,

նպատակ ունենալով արագացնելու սահմաններով տեղափոխվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների մաքսային ընթացակարգերի և մաքսային հսկողության իրականացումը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը մշտական հիմքով կազմակերպում և իրականացնում են տեղեկությունների փոխանակում, որոնք ստացվել են մի Կողմի պետության տարածքից դուրս բերվող, ճանապարհային տրանսպորտով փոխադրվող ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային ընթացակարգերի իրականացման ժամանակ, ինչպես նաև այն ապրանքների նկատմամբ, որոնց տարանցումն իրականացվում է մի Կողմի տարածքով, եթե նրանց նշանակման վայրը գտնվում է մյուս Կողմի պետության տարածքում, ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով՝ մինչև ապրանքների նշանակման երկրի սահմանը հատելը (այսուհետ՝ նախնական տեղեկատվություն):

Նախնական տեղեկատվության փոխանակումն իրականացվում է Կողմերի կողմից՝ իրենց իրավասության սահմաններում և Կողմերի պետությունների օրենսդրությանը, ինչպես նաև միջազգային նորմերին և մաքսային գործի ոլորտում ընդունված պրակտիկային համապատասխան:

Փոխանակման համար նախատեսված նախնական տեղեկատվության կազմը ներկայացված է սույն Արձանագրության հավելվածում:

Հոդված 2

Կողմերն օգտագործում են նախնական տեղեկատվությունը Կողմերի պետությունների սահմաններով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային

հսկողության անմիջական իրականացման ժամանակ ռիսկերի վերլուծության և կառավարման մեթոդների կիրառման հիման վրա:

Հոդված 3

Սույն Արձանագրությանը համապատասխան՝ Կողմերի կողմից ստացված նախնական տեղեկատվությունը կրում է գաղտնի բնույթ և չի կարող փոխանցվել երրորդ անձանց՝ առանց այդ տեղեկատվությունը տրամադրած Կողմի գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղեկատվությունը տրամադրվում է Կողմերի պետությունների պետական մարմիններին:

Կողմերն ապահովում են ստացված նախնական տեղեկատվության գաղտնիությունը՝ իրենց պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 4

Կողմերը միմյանց տեղեկացնում են այն տեղեկությունների ոչ հավաստի լինելու ցանկացած բացահայտված դեպքի մասին, որոնք ստացվել են Կողմերի պետությունների սահմաններով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տեղեկատվության փոխանակման արդյունքում:

Հոդված 5

Կողմերը համաձայնեցնում են հիմնական տեխնոլոգիական սկզբունքները, նախնական տեղեկատվության փոխանցման կարգը, տվյալների կառուցվածքը և ձևաչափը, տվյալների փոխանցման ժամանակ նախնական տեղեկատվության պաշտպանությանն ուղղված պահանջները, նախնական տեղեկատվության նույնականացման կարգը՝ ապրանքների կոնկրետ խմբաքանակին և (կամ) կոնկրետ տրանսպորտային միջոցներին նախնական տեղեկատվությունը համապատասխանեցնելով, ինչպես նաև՝ նախնական տեղեկատվության փոխանակմանը մասնակից Կողմերի պետությունների մաքսային մարմինների ցանկը:

Հոդված 6

Կողմերը միմյանց տեղեկացնում են իրենց կառուցվածքային ստորաբաժանումների պաշտոնատար անձանց նշանակման մասին, որոնք իրականացնում են.

տեղեկատվական փոխգործակցության տեխնիկական պայմանների, տվյալների մշակման և փոխանցման տեխնոլոգիաների, տեղեկատվության պաշտպանությանն ուղղված պահանջների մշակում և համաձայնեցում,

ապրանքների և տրանսպորտային միջոցների նույնականացման եղանակների համաձայնեցում՝ ապրանքների կոնկրետ խմբաքանակի և (կամ) կոնկրետ տրանսպորտային միջոցների հետ նախնական տեղեկատվությունը համապատասխանեցնելու նպատակներով,

սույն Արձանագրության դրույթների իրականացման հետ կապված հարցերի կարգավորում:

Հոդված 7

Սույն Արձանագրության 5-րդ և 6-րդ հոդվածներում նշված հարցերը համաձայնեցնելուց հետո Կողմերը կատարում են անհրաժեշտ կազմակերպչական և տեխնիկական միջոցառումներ, ընդունում են որոշում սույն Արձանագրության իրականացման առաջին փուլը անցկացնելու վերաբերյալ և գրավոր համաձայնեցնում են նրա իրականացումն սկսելու ժամկետները:

Առաջին փուլում սույն Արձանագրության դրույթները կիրառվում են 6 ամսվա ընթացքում Կողմերի պետական սահմաններով նրանց կողմից համաձայնեցված երկու անցակետերում, որոնցում կօգտագործվի սույն Արձանագրության շրջանակներում ստացված նախնական տեղեկատվությունը:

Հոդված 8

Սույն Արձանագրության 7-րդ հոդվածի իրականացման արդյունքներով Կողմերը որոշում են ընդունում մշտական հիմքով նախնական տեղեկատվության փոխանակում

կազմակերպելու մասին՝ Կողմերի կողմից համաձայնեցված մաքսային մարմինների անվանացանկով:

Կողմերը գրավոր համաձայնեցնում են մշտական հիմքով նախնական տեղեկատվության փոխանակում սկսելու ժամկետները:

Հոդված 9

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Արձանագրության մեջ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք հանդիսանում են նրա անբաժանելի մասը և ձևակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 10

Սույն Արձանագրության դրույթների մեկնաբանման և կատարման ժամանակ Կողմերի միջև առաջացած վեճերը կլուծվեն նրանց միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 11

Սույն Արձանագրության դրույթները չեն շոշափում Կողմերի՝ այլ միջազգային պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտականությունները, որոնց մասնակից են նրանց պետությունները:

Հոդված 12

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կողմերի՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից և գործում է հինգ տարվա ընթացքում: Նշված ժամկետի ավարտից հետո այն ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ հինգ տարիների համար:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Արձանագրության գործողությունը՝ իր մտադրության մասին մյուս Կողմին գրավոր ծանուցում ուղարկելով ոչ ուշ, քան Արձանագրության գործողության հերթական ժամկետը ավարտվելուց երեք ամիս առաջ:

Կատարված է Չոլփոն Աթա քաղաքում 2012 թվականի հունիսի 22-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2013թ. մայիսի 23-ին:

Արձանագրությանը կից հավելված

Տեղեկատվական փոխանակման կազմակերպման համար անհրաժեշտ նախնական տեղեկատվության կազմ

	Տեղեկություն ապրանքներ տեղափոխող կամ այդ ապրանքների տեղափոխման նախաձեռնություն ցուցաբերած անձանց վերաբերյալ	**Տեղեկություն տրանսպորտային միջոցների վերաբերյալ**	**Տեղեկություն ապրանքների վերաբերյալ**	**Տեղեկություն ապրանքներն ուղեկցող, տրանսպորտային և այլ փաստաթղթերի վերաբերյալ**	**Այլ տեղեկություններ**
1	2	3	4	5	6
Անհրաժեշտ տեղեկություններ	1. Ապրանքներ ուղարկողի անունը: 2. Ապրանքներ ստացողի անունը: 3. Հայտարարատու: 4. Ֆինանսական	Ակտիվ տրանսպորտային միջոցի համարը:	1.Ապրանքների անվանումը: 2.Ապրանքի սերիական համարը: 3. Ապրանքի գինը: 4.Պայմանագրի	1. Ապրանքների առաքման պայմանները՝«Ինկոտերմս»-ին համապատասխան, աշխարհագրական կետի անվանումը:	1. Ապրանքներ ուղարկող երկրի ծածկագիրը: 2. Ապրանքների նշանակման երկրի ծածկագիրը:

	կարգավորման համար պատասխանատուանձ: 5. Ուղարկողի ՀՎՀՀ-ն: 6. Ապրանքներ տեղափոխողի անունը (եթե ապրանքները տեղավորվում են մաքսային տարանցման մաքսային ընթացակարգերում)		գնի արտարժույթի ծածկագիրը: 5. Բեռների տեղերի ընդհանուր քանակը: 6.Ապրանքների կոպիտ քաշը: 7. Ապրանքների մաքուր քաշը: 8. Ապրանքների դասակարգիչ ծածկագիրը՝ ըստ Ներդաշնակեցման համակարգի (6 նիշից ոչ պակաս): 9. Ապրանքների ընդհանուր քանակը: 10. Փաթեթավորման տեսակի ծածկագիրը: 11. Պահանջվող մաքսային ընթացակարգի ծածկագիրը: 12. Նախորդող մաքսային ընթացակարգի ծածկագիրը:	2.Պայմանագրի ամսաթվի և/կամ հաշիվ-ապրանքագրի համարը:	3. Ապրանքների ծագման երկրի ծածկագիրը: 4. Փաստաթղթի գրանցման համարը: 5. Ապրանքների փոխադրման ուղղությունը:
Լրացուցիչ տեղեկություններ	1. Ապրանքներ ուղարկողի հասցեն: 2. Ապրանքներ ստացողի հասցեն: 3. Հայտարարատուի հասցեն:	1. Տրանսպորտային միջոցի տեսակի ծածկագիրը: 2. Տրանսպորտային միջոցի գրանցման երկրի ծածկագիրը: 3. Բեռնարկղի համարը:	1. Ապրանքների նկարագրությունը: 2. Փաթեթավորման նկարագրությունը (քանակը, տեսքը, մակնշումը և սերիական համարները): 3. Տեղեկություններ ապրանքներ արտադրողի մասին: 4. Տեղեկություններ ապրանքների մակնշման մասին: 5. ՁԼՄ ապրանքների քանակը:6. Չափման լրացուցիչ միավորի ծածկագիրը:	1. Տեղեկություններ տեղափոխվող ապրանքների առևտրային փաստաթղթերի մասին: 2. Տրանսպորտային փաստաթղթերի մասին տեղեկություններ:	
Տեղեկատու տեղեկություններ	1. Ցանկացած լրացուցիչ տեղեկություն	1. Տրանսպորտային միջոցների մասին	1. Ապրանքների մասին ցանկացած լրացուցիչ	1. Ցանկացած լրացուցիչ տեղեկություն:	Ցանկացած լրացուցիչ տեղեկություն:

	ապրանքներ տեղափոխող կամ այդ ապրանքների տեղափոխման նախաձեռնություն ցուցաբերած անձանց մասին:	ցանկացած լրացուցիչ տեղեկություն:	տեղեկություն:		